**Հաստատված է**
**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի**
« 28» 08. 20 17 **թ.-ի նիստում :Արձ. թիվ** 1 )
**Իրավագիտության ֆակուլտետի պետ՝**
**Մ.Մուրադյան**
« »----------2017 **թ.**

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

## / Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա /

| | | |
|---|---|---|
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | | Վարչական իրավունք |
| | | |
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ** | | |
| | | |
| **ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | Իրավագիտություն,վճարովի ուսուցում |
| | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ԱՄԲԻՈՆ** ▪ | | Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն |
| | | |
| **ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ** | | Լ.Մանուկյան<br>Հեռ.094152055 |
| | | |
| **ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ** | | 2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ |
| **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ** | | բակալավր |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԵԴԻՏՆԵՐ** | | **4 (չորս)** |
| | | |
| **ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ** | | «Վարչական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 96 ժամ, որից 64 դասախոսություն, 28 սեմինար, 4 գործնական:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը չորս լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով: |
| | | |
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ** | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն » դասընթացի իմացության վրա: |
| | | |
| **ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** | | «ՀՀ վարչական իրավունք » դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են վարչական իրավունքի հասկացությունը, |

| | | |
|---|---|---|
| | | առարկան, համակարգը, խնդիրները, սկզբունքները, վարչական իրավախախտման հասկացությունն ու տեսակները, իրավախախտման հասկացությունը, տարրերն ու հատկանիշները, վարչական պատասխանատվությունն ու դրա հիմքը, վարչական վարույթի և դատավարության փուլերն: |
| | | |
| **ՆՊԱՏԱԿ**<br><br>**ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ վարչական իրավունքի հասկացության, առարկայի, համակարգի, խնդիրների, սկզբունքների, վարչական օրենքի հասկացության, վարչական իրավախախտման հասկացության ու տեսակների, վարչական իրավախախտման իրավաբանական կազմի հասկացության, տարրերի ու հատկանիշների, վարչական պատասխանատվության ու դրա հիմքի վերաբերյալ:<br><br>Դասընթացի խնդիրներն են՝<br>• ներկայացնել վարչական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները,<br>• ուսումնասիրել վարչական իրավունքի սկզբունքները,<br>• սահմանել վարչական օրենքի հասկացությունը,<br>• վեր հանել ժամանակի ընթացքում և տարածության մեջ վարչական օրենքի գործողության առանձնահատկությունները,<br>• ներկայացնել վարչական իրավախախտման հասկացությունն ու տեսակները,<br>• ներկայացնել իրավախախտման իրավաբանական կազմի հասկացությունը, տարրերն ու հատկանիշները,<br>• ուսումնասիրել վարչական պատասխանատվությունն ու դրա հիմքը: |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br><br>*1. **կարողանա*** | | 1. սահմանել վարչական իրավունքի հասկացությունը, համակարգը և խնդիրները,<br>2. բացահայտել վարչական իրավունքի առարկայի բովանդակությունը,<br>3. ներկայացված կոնկրետ իրավիճակում հայտնաբերել վարչական իրավունքի կոնկրետ սկզբունքի խախտումը,<br>4. ներկայացված կոնկրետ իրավիճակում որոշել վարչական իրավախախտման կատարման պահը և ճիշտ լուծել վարչական օրենքի հետադարձ ուժի հարցը,<br>5. տարբերել տարածության մեջ վարչական օրենքի գործողության սկզբունքները,<br>6. տալ վարչական իրավախախտման հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները,<br>7. բացահայտել վարչական իրավախախտման իրավաբանական կազմի տարրերի բովանդակությունը,<br>8. ներկայացնել վարչական պատասխանատվության և պատժի տարբերությունները,<br>9. սահմանել վարչական պատասխանատվության հասկացությունը: |

| | | |
|---|---|---|
| | | |

| | | |
|---|---|---|
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| | | |
| **Հիմնական** | | 1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն 1995թ./փոփոխ. 2015թ./<br>2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք 2007թ.<br>3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի հանրապետության օրենսգիրք 1985թ.<br>4. Հայաստանի հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, 05.02.2013թ: ՀՀՊՏ 2013թ., 12..28/73/1013/.1<br>5. Իրավական ակտերի մասին Հայաստանի հանրապետության օրենք, 03.04.2002թ., ՀՀՊՏ 2002.05.21/15/190/: |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1. Գ.Դանիելյան «Վարչական պատասխանատվություն»:Ուսումնական ձեռնարկ /Երևան:«Լույս» հրատարակչություն, 2002թ.-280 էջ/<br>2. Գ.Դանիելյան «Վարչական վարույթ և դատավարություն»: Ուսումնական ձեռնարկ / Երևան:Տիգրան Մեծ, 2011թ. -384 էջ:<br>3. Գ.Իսրայելյան «ՀՀ վարչական իրավունք»: Դասախոսությունների և խնդիրների ժողովածու:/Երևան Աստղիկ գրատուն 2015թ. -147 էջ/<br>4. Ազգային անվտանգության մարմինների մասին Հայաստանի Հանրապետության օրենք,28.12.2001: ՀՀՊՏ 2002.02..55/6/181/:<br>5. Արհեստակցական միությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 05.12.2000թ.,ՀՀՊՏ 2001.01.15/1/133/:<br>6. Զինապարտության մասին Հայաստանի հանրապետության օրենք, 16.09.1998: ՀՀՊՏ 1998.10.16/26/59/:<br>7. Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին Հայաստռանի Հանրապետության օրենք, 03.04.2001թ, ՀՀՊՏ 2002.07.03./23/198/:<br>8. Լիցենզավորման մասին Հայաստանի հանրապետության օրենք, 30.05.2001թ.,ՀՀՊՏ 2001.08.08./26/158/:<br>9. Административная ответственность:учеб. Пособие для студентов вузов,обучающихся по специальности 030501 <<Юриспруденция>> /А.И.Стахов и др; под ред. И.Ш.Килясханова, А.И.Стахова -3-е изд.,перераб. И доп. –М.:ЮНИТИ-ДАНА:Закон и право,2008г. -144 էջ<br>10. Барах Д.Н., Ренов Э.Н. Производство по делам об одминистративных правонарушениях /Пособие для слушателей народных унижерситетов/ -М.: Знание, 1989г.-96 էջ<br>11. Парыгин Н.П., Головко В.В. Исполнение административних наказаний:Учеббное пособие –М.: Изд.-во Эксмо, 2006г. 128 էջ<br>12. Сорокин В.Д. Административно- процессуальное право:Учебник 2-е изд.,перераб. И доп. /Подгот.докт.юрид.наук, проф. А.И.Каплуновым – СПБ.:Издательство Р.Асланова <<Юридический центр Пресс>>, 2008г.- |

| | | |
|---|---|---|
| | | 571 էջ |
| | | |

| | | |
|---|---|---|
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ | | Քննություն /գերազանց, լավ , բավարար, անբավարար/ |
| | | |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:<br>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները: |
| | | |
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| **Ներկայություն** | | Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |

| | | |
|---|---|---|
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| **Թեմա 1**<br>« **Վարչական իրավունքի բնութագիրը**»<br>(4 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**) | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. «Վարչական իրավունքը» որպես հանրային իրավունքի ճյուղ:<br>2. Վարչական իրավուքի կարգավորման առարկան:Պետական կառավարում և կառավարչական հարաբերություններ:Կառավարման բնութագիրը և տեսակները:Վարչաիրավական հարաբերությունների հատկանիշները,կառուցվածքը և տեսակները:<br>3. Վարչական իրավունքի կարգավորման մեթոդները:<br>4. Վարչական իրվունքի աղբյուրները:<br>5.Վարչական իրավունքի նորմի հասկացությունը և գործառույթները: Վարչական իրավունքի նորմի կառուցվածքը:Վարչական իրավունքի նորմերի դասակարգումը: Վարչական իրավունքի նորմերի իրագործման հասկացությունը և եղանակները:<br>6.Վարչական իրավունքի համակարգը:Վարչական իրավունքի կապն իրավունքի այլ ճյուղերի հետ: Վարչական իրավունքի գիտությունը: | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 2**<br>**Վարչական իրավունքի սուբյեկտները**<br>(6 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Վարչական իրավունքի սուբյեկտի բնութագիրը:<br>2. Վարչական իրավունքի անհատական սուբյեկտները: | Հարցեր 1-6 - կարդացվում է դասախոսություն: |

| | |
|---|---|
| 3. Ֆիզիկական անձինք որպես վարչական իրավունքի սուբյեկտներ:ՀՀ քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը:Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը:Օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը:<br>4. Պետական ծառայողի վարչաիրավական կարգավիճակը:<br>5.Վարչական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտները: Հասարակական միավորումների վարչաիրավական կարգավիճակը:<br>6.Գործադիր իշխանության բնութագիրը:Գործադիր իշխանության և պետական կառավարման հարաբերակցությունը:Գործադիր իշխանության մարմինները որպես վարչական իրավունքի սուբյեկտներ:ՀՀ կառավարության ձևավորման կարգը, կառուցվածքը և լիազորությունները:Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելը:Հանրապետական գործադիր մարմիններ: | Հարցեր 3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:<br>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: |

| **Թեմա 3**<br>**Վարչական պատասխանատվություն**<br>(8 ***ժամ դասախոսություն***, 4 ***ժամ սեմինար***) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Վարչական պատասխանատվության բնութագիրը:<br>2. Վարչական պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները:<br>3. Վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները:<br>4. Վարչական պատասխանատվությունից ազատելը:<br>5. Վարչական իրավախախտումը և դրա իրավաբանական կազմը:<br>6. Վարչական իրավախախտումների բազմակիությունը: | Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով:<br>Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը և ներկայացնում խնդրահարույց հարցերը:<br>Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:<br>Հարցեր2- 6 – ինքնուրույն աշխատանք: ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:<br><br>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: |

| **Թեմա 4**<br>**Վարչարարության հիմունքներ**<br>(6 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Վարչարարության բնութագիրը:<br>2.Վարչարարության հիմնարար սկզբունքները:<br>3.Վարչարարության ձևերը:<br>4.Վարչարարության մեթոդները:Տնտեսական և վարչական մեթոդներ:Վարչական հարկադրանք:Վարչական հարկադրանքի տեսակները՝վարչական նախականխիչ միջոցներ, վարչական կանխիչ-խափանիչ միջոցներ, վարչական տույժեր:<br>5.Վարչարարության օրինականության ապահովումը: | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն :<br>Հարցեր 4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:<br>Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են տեստային առաջադրանքներ: |

| **Թեմա 5**<br>**Վարչական վարույթ**<br>(8**ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 2 ժամ գործնական**) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Վարչական վարույթի հասկացությունը և հատկանիշները:Վարչական վարույթի նպատակը, բովանդակությունը, մասնակիցները և օբյեկտը:<br>2.Վարչական վարույթային նորմեր և հարաբերություններ:<br>3.Վարչական վարույթի ժամկետները, ժամկետը երկարաձգելու հիմքերը և կարգը:<br>4.Բացարկը և ինքնաբացարկը վարչական վարույթում:<br>5.Վարչական վարույթի կասեցման և կարճման հիմքերը և կարգը:<br>6.Վարչական վարույթի հարուցման փուլը:Գործերի ենթակայությունը վարչական մարմիններին:Վարչական վարույթ հարուցելու հիմքերը և կարգը:<br>7.Վարչական վարույթի ընթացիկ փուլը:Գործի հանգամանքների պարզաբանմանն ուղղված գործողությունները: | Հարցեր 1-15 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-16 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: |

| | |
|---|---|
| 8.Վարչական վարույթի եզրափակիչ փուլը:Վարչական ակտի հասկացությունը, հատկանիշները:Վարչական ակտի տեսակները:Վարչական ակտի ընդունման կարգը և ընդունման մասին իրազեկումը:Ակտի ուժի մեջ մտնելը: Առ ոչինչ վարչական ակտը, ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները:<br>9.Իրավալիազորող վարչական վարույթները ՀՀ-ում:Պետական գրանցման վարույթներ:<br>10.Իրավապահ վարչական վարույթներ ՀՀ-ում:<br>11.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները:<br>12.Բողոքարկման վարույթի էությունը:Վարչական մարմնի գործողության կամ անգործության, վարչական ակտի բողոքարկման հիմքերը, կարգը, ժամկետները և հետևանքները:<br>13.Վարչական ակտերի հարկադիր կատարման վարույթը:Հարկադրանքի միջոցների էությունը և տեսակները:<br>14.Վարչական ծախսերի հասկացությունը և տեսակները:<br>15.Փորձագետի վարձատրության պայմանները:Թարգմանչի վարձատրության պայմանները: Վկային վճարումներ կատարելու պայմանները:Գիշերավարձի և օրապահիկի ծախսերը: Վճարումներ կատարելու կարգը:<br>16.Վաևրական վարույթի վերաբերյալ գործերի վարման կարգը:Վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը:Վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը: | Հարցեր 15-16 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը: |

| **Թեմա 6**<br>**Վարչական դատավարություն**<br>(10**ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար, 2 ժամ գործնական**) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Վարչական դատավարության բնութագիրը:<br>2.Վարչական դատարանի հասկացությունը և հատկանիշները:<br>3.Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում:<br>4.Ապացուցման ենթակա հանգամանքները վարչական դատավարությունում: Ապացուցման տեսակները:Վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը, գրավոր և իրեղեն ապացույցները:<br>5.Ապացուցումը վարչական դատավարությունում:<br>6.Դատական հանձնարարությունը և դրա տեսակները:<br>7.Դատավարական ժամկետների հասկացությունը և հաշվառման կարգը: | Հարցեր 1-23 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-23 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես |

| | |
|---|---|
| 8.Դատական ծախսերի հասկացությունը,նպատակները և տեսակները:<br>9.Դատական ծանուցման նշանակությունը:Ծանուցագրին ներկայացվող պահանջները:Պատշաճ ծանուցումը:<br>10.Վարչական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը:<br>11.Գործի հարուցումը վարչական դատարանում:Հայցի հասկացությունը և տեսակները:Հայց ներկայացնելու կարգը:Հայցադիմումը վարույթ ընդունելը, հայցադիմումը վերադարձնելը, հայցադիմումի ընդունումը մերժելը, հայցադիմումի վերահասցեագրելը:<br>12.Գործը դատաքննությանը նախապատրաստելու կարգը:<br>13.Գործի վարույթի կասեցնելը և կարճելը:<br>14.Դատաքննությունը վարչական դատարանում:Գրավոր դատաքննություն:Արագացված դատաքննություն:<br>15.Վարչական դատարանի դատական ակտերի հասկացությունը և տեսակները:<br>16.Վարույթը վերաքննիչ դատարանում:<br>17.Վարույթը վճռաբեկ դատարանում:<br>18.Գործերի նոր քննությունը:<br>19.Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթ:<br>20.Դատական ակտերի հարկադիր կատարումը:<br>21.Հատուկ վարույթի էությունը և տեսակները:<br>22.Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ:<br>23.Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու գործերի վարույթ:<br>24.Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթ:<br>25.Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթ:<br>26.Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի վերաբերյալ գործերի վարույթ:<br>27.Լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ<br>28.Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթ: | հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:<br>Հարցեր 24-28 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը: |
| **Թեմա 7**<br>**ՀԱՏՈՒԿ ՄԱՍ**<br>**Պետական կառավարումը արտաքին հարաբերությունների և կապերի բնագավառում**<br>(4**ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**) | |
| 1.Բնագավառի կառավարման իրավական հիմքերը:<br>2.Բնագավառի կառավարման մարմինները/ՀՀ արտաքին գործերի նախարարություն,ՀՀ սփյուռքի նախարարություն/ դրանց խնդիրները և գործառույթները, կառուցվածքը: | Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված |

| | |
|---|---|
| | խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: |
| **Թեմա 8**<br>**Պետական կառավարումը վարչաքաղաքական բնագավառում բնագավառում**<br>(6**ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**) | |
| 1.Բնագավառի կառավարման իրավական հիմքերը:<br>2.Բնագավառի կառավարման մարմինները/ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն, ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորմանպետական կոմիտե / դրանց խնդիրները և գործառույթները, կառուցվածքը: | Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: |
| **Թեմա 9**<br>**Պետական կառավարումը տնտեսության բնագավառում**<br>(6**ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**) | |
| 1.Բնագավառի կառավարման իրավական հիմքերը:<br><br>2.Բնագավառի կառավարման մարմինները/ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն / դրանց խնդիրները և գործառույթները, կառուցվածքը: | Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: |

| **Թեմա 10**<br>**Պետական կառավարումը սոցիալ-մշակութային բնագավառում**<br>(6**ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**) | |
|---|---|
| 1.Բնագավառի կառավարման իրավական հիմքերը:<br>2.Բնագավառի կառավարման մարմինները/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, / դրանց խնդիրները և գործառույթները, կառուցվածքը: | Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: |